# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

**«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/32» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան 07 հուլիսի 2022թ.

Ժամը 11:00

Մասնակցում էին՝

Նախագահ՝ Հարություն Տանանյան

Անդամներ՝ Հայկ Հովհաննիսյան, Արմեն Հովսեփյան

Քարտուղար՝ Նելլի Աբովյան

**1. «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/32» ծածկագրով գնման ընթացակարգի դիմում-հայտարարության շտկման մասին**

**1.1** «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/32» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի N 1 չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած «ՍՄԱՐԹՈԼՈՋԻՍԹԻՔՍ» ՍՊԸ-ի հայտում առկա անհամապատասխանությունների շտկման նպատակով՝ 04.07.2022թ.-ին կայացած հայտերի բացման նիստով հանձնաժողովը որոշում էր կայացրել. հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4 N 526-Ն որոշման 41-րդ կետը, 1 աշխատանքային օրով կասեցնել գնման ընթացակարգը և «ՍՄԱՐԹՈԼՈՋԻՍԹԻՔՍ» ՍՊԸ-ին տալ շտկման հնարավորություն՝ N 1 չափաբաժնի մասով:

**2. «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/32» ծածկագրով գնման ընթացակարգի դիմում-հայտարարության շտկման գնահատման մասին.**

2.1 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/32» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի դիմում-հայտարարության շտկման համար նախատեսված ժամանակահատվածի ավարտից հետո, գնահատող հանձնաժողովը, գնահատեց «ՍՄԱՐԹՈԼՈՋԻՍԹԻՔՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, որի արդյունքում պարզվեց հետևյալը.

«ՍՄԱՐԹՈԼՈՋԻՍԹԻՔՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմում-հայտարարության մեջ բացակայում է էլեկտրոնային ստորագրությունը և իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը, դիմում հայտարարության մեջ սխալ է գրված էլեկտրոնային աճուրդի ծածկագիրը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում ապրանքային նշանի, արտադրողի անվանման և տեխնիկական բնութագրի սյունակներում առկա են անհամապատասխանություններ՝ ուղղակի դրված են գծիկներ:

Վստահ կարող ենք արձանագրել, որ «ՍՄԱՐԹՈԼՈՋԻՍԹԻՔՍ» ՍՊԸ-ի կողմից, դիմում-հայտարարության շտկման համար նախատեսված ժամանակահատվածի ընթացքում, ոչ մի շտկում չի իրականացվել:

2.2 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/32» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովը որոշեց՝

ա/ «ՍՄԱՐԹՈԼՈՋԻՍԹԻՔՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և հայտը մերժել, քանի որ վերջինս չի համապատասխանել հրավերով սահմանված պահանջներին,

բ/ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/32» ծածկագրով գնման ընթացակարգի N 1 չափաբաժնի մասով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած,

գ/ Սահմանված կարգի համաձայն, «ՍՄԱՐԹՈԼՈՋԻՍԹԻՔՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու որոշումը ներկայացնել ՀՀ Ֆինանսների նախարարություն:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0**

| | | |
|---|---|---|
| **Հանձնաժողովի նախագահ՝** | _____ | **Հ. Տանանյան** |
| **Քարտուղար** | _____ | **Ն. Աբովյան** |
| **Անդամներ՝** | _____ | **Հ. Հովհաննիսյան** |
| | _____ | **Ա. Հովսեփյան** |